17. *Թօլլամայ թոռ.* բանուած է մարգրտով և վարի կողմն ալ ոսկիներ շարուած է սրտերնու վրան կձգեն։

18 *Պթիռ.* Թևերնին կդնեն ոսկի է։

19. *Սէկտակ պթիռ.* Թևերնին կդնեն ոսկի է։

20. *Թեփ Նալիր չակըտակ.*

21. *Ոսկի պոշիր.* գլխնու ետևը կը ձգեն։

22. *Ջէքիր.* մեծ մատերնին կդնեն։

23. *Թախըմ.* միւս մատերնուն կդնեն, և ուրիշ տեսակ տեսակ մատանիներ կայ, էլմաստ, եագուտ, զմրուտ ևայլն։

Արծաթեղէն.

24. *Քամար.* տեսակ տեսակը կայ, չիֆթիշի, չագալայ և երկար կամարներ։

25. *Թիղըամայ.* տեսակ մը կոճակէ զանձիրի վրան կշարեն և կկարեն թևերնուն։

26. *Ջնկզնկ.* պզտիկ տղակներու ոտք կանցնեն։

27. *Մըսասէ.* մանուկներու թև կանցնեն զըօսանքի համար։

28. *Ճըքլազ.* աղջիկներ պօղազնին կանցնեն։

Հայ քիւրդերու ձգած արծաթեղէնները։

1. *Պլազուկ.* Թևերնին կդնեն։
2. *Օղեր.* ականջնին կդնեն։
3. *Մատանի.* մատերնին կդնեն։
4. *Քամար.* մէջքերնին կկապեն. տեսակ տեսակը կայ։
5. *Փօզմանճայ* վզերնին կձգեն։
6. *Ճըռիթներ.* գլուխնին կկապեն։

(Գ. եպ. Սրուանձտեանի հաւաքածոյքից)

## ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ. Գ. տպ. Վաղարշապատ 1896.

Կարապետ վարդապետ. Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի թուղթը առ Աբաս Աղուանից կաթուղիկոս, Վաղարշապատ 1896.

— Յովհաննու իմաստասիրի Հայոց կաթուղիկոսի խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնացելոյ բանին Քրիստոսի և ընդդէմ զաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս. Վաղարշապատ 1896.

*Կ· Կոստանեանց·* Համամ արևելքի· Վաղարշապատ 1896·
— Ս· Լուսաւորչի աջը, Վաղարշապատ. 1896·
*Իմին Տէր-Գրիգորեան·* Դամոկլեան սուր, Երևան 1896·
*Օ· Բիօգովա·* Աշխէնն ու Մարգարիտը, Թ· ռուս· Թիֆլիս 1896·
*Թ· Նիկօլդէքէ·* Պատմութիւն Սասանեան տէրութեան. Թարգ· Ն· Քարամեան, Վաղարշապատ 1896·
*Ֆոնինովի տնակը·* Թարգ· Գ· Եպիս· Այվազեան· Վաղարշ· 1896·
*Ռուստամ Գէորգ Բարխուդարեանց.* Զօրանն ու նշանածը· Տըփխիս 1896·
*Գր· Խալաթեանց·* Ա· և Բ· Մացորդայ գրքերի նորագիւտ հայ թարգմանութիւնը, Վաղարշապատ 1896.
*Երեք վէպիկ·* Թարգ· Լևոն Մելիք-Ադամեան Թիֆլիս· 1896·
*Ց· Մալխասեանց·* Պատանեկան յուշեր· Թիֆլիս 1896
*Ն· Պագոսխին·* Սարսափելի վրէժխնդրութիւն· Թ· Լ· Գէորգեան· Հրատ· Գրիգոր Փարսադանեանի. Տփխիս 1896.
*Ամբր· Վ· Գալֆայեան·* Պատմութիւն հին և նոր կտակարանի· Բ· տպ· Վաղարշապատ 1897·
*Գրիգոր եպիս· Աղաւնիրեան·* (Թարգ·) կրօնական-բարոյական խորհրդածութիւններ հատ. Ա—Դ· Բ· տպ· Վաղարշ· 1897·
*Ցակոբ Բարխուդարեան·* Տանուտէր Օհանը· Թիֆլիս 1897·
*Կ· Կոստանեանց·* Տէր Պետրոս Ս· Գետադարձ· Վաղարշ. 1897·
*Սոկրատայ Սքոլաստիկոսի* Եկեղեցական պատմութիւն հատ. Ա· Բ· աշխ· Մեսրոպ վ· Տէր Մովսիսեան Վաղարշապատ 1897·
*Սոկրատայ* Պատմութիւն եկեղեցական եւ վարք ս· Սեղբեստրոսի· աշխ· Մեսրոպ գ· Տէր Մովսիսեանի. Վաղարշապատ 1897·
*Ագաթանգեղոսի աղբիւրներից յիշատակ դատակնքաց Գորեա եւ Շմոնի վկայից որ վկայեցին յուռհա.* Հրատ. Գալուստ Տէր Մկրտչեան. Վաղարշապատ 1896·
*Պրոֆ· Ի· Իեգրայամ.* Ադինայի նամակները· Թարգ· ռուս· Ցովսէփ քահ· Տէր Պետրոսեանց· Թիֆլիս 1897··
*Արօրի օրացոյց·* 1897 Բաքու·
*Աննենսկայա Ա·* Գոհարիկն ու Աստղիկը· Թ· ռուս· Թիֆ· 1897·
*Խաչատուր Աբովեանի երկերը:* Հր· Խս· Ժամհարեանց. Մոսկվ· 1897·
*Պրոֆ· Մ· Բողդանով·* Խծուծներ. պատ Թ· Լ· Մ-Ադամեանց·
*Ազգագրական հանդէս·* Բ· գիրք· 1897 Թիֆլիս.
*Չիսավյօզի.* Գիւղական վարժուհին Թարգ· Լ· Մելիք-Ադամեանց· նոր մատենադարանի Ը· գիրք· 1897 Թիֆլիս·
*Ստեփան Անտոնեան-Բանանցեցի·* Ղեկավարներ· գիրք Ա· (կապ բանտը և մեր տէրը)· արտ· ,,Լումայ'' հանդէսից, 1897 Թիֆլիս.
*Հ· Գ· Զարբհանալեան·* Հայկական հին դպրութեան պատմութեան Դ—ԺԳ· դար) գ· տպ· Վենետիկ 1896·
СУЛТАНЪ и ДЕРЖАВЫ препод· Малькольма макъ-колля· перев· съ Англ· С. П· Б. 1897·

---

„Լումայ" հանդէսի խմբագրութիւնը ձեռնարկում է մեր նշանաւոր ժողովրդագիր և հեղինակ հանգուցեալ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցի ծանօթ երկերի հրատարակութեան, որոնք ամփոփուած կլինին 5 հատորների մէջ հետևեալ դասաւորութեամբ․

Ա. հատ.—Գրոց եւ բրոց
Հնոց եւ նորոց
Շուշան Շաւարշանայ.
Բ. „ Մանանայ
Գ. „ Թորոս աղբար ա.
Դ. „ Թորոս աղբար բ.
Ե. „ Համով հոտով.
Հեղինակի կենսագրութիւնը, պատկերը, քննադատութիւններ եւայլն:

Իւրաքանչիւր գիրքը բաղկացած կլինի 8-ածալ 5—600 երեսներից, իսկ ամբողջ հրատարակութիւնը մօտ 3000 երեսից:

Կհրատարակուի պրակներով, իւրաքանչիւրը մօտ 160 երեսից:

Այս գործի համար բաժանորդագրութիւն է բացւում: Կարելի է գրուել իւրաքանչիւր պրակին առանձին եւ ամբողջ հրատարակութեան միասին: Ամեն մէկ պրակը արժէ 40 կոպ., իսկ ամբողջ հրատարակութիւնը միասին 6 ռուբլի: 5 հատորը տպագրուելուց յետոյ կարժենայ 10 ռուբլի:

---

Հանգուցեալ Սրուանձտեան սրբազանի գրագրութիւնների մէջ մենք գտանք մի բաւական ստուար աշխատութիւն „Մշոյ աշխարհի ստորագրութիւն" վերտառութեամբ, որ սկսեցինք հրատարակել „Լումայ"ի նախընթաց գրքից: Այդ գործը մենք հանգուցեալ Սրուանձտեանի երկասիրութիւն պիտի համարէինք, եթէ նորա „Գրոց ու բրոց" գրքի ԼԸ: գլխի մէջ չկարդայինք, որ „Տրապիզոնցի գիտնական Պօղոս պատուելին Թովմաեանց Տրապիզոնի եւ Տարօնոյ ստորագրութիւնները աշխատասիրած է յանձնարարութեամբ ս. Հայրիկին, հանդերձ կարեւոր լուսաբանութեամբ հին աւանդութեանց եւ անուանակոչութեանց զանազան վայրաց, որք կը գտնուին այդ երկու աշխարհին մէջ, եւ հանդերձ նկարագրութեամբ Տարօնոյ բնակչաց սովորութեանց եւ լեզուին:—Դեռ տպագրուած չեն այս գործքերը": Ըստ այսմ պէտք է ենթադրել, որ „Մշոյ աշխարհ" երկը պատկանում է պ. Պօղոս Թովմայեանցի գրչին:

---

Հրատարակիչ ԳԻՒՏ ԱՒԱԳ ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ